

Չեմ կարծեր որ կապերտ՝ կամ ինչպէս որ Հայկազեան Բառգիրքն ալ նշանակած է ուսմիօրէնի համար կապերտ՝ հնագոյն դարերէն սկսելով երբեք իր իմաստը «անխաւ գորգ» փոխած ըլլայ: Մովսէս Կաղանկատուացի կը գործածէ զգոյնագոյն կապերտս⁽⁹⁾ իբր լաւ իբր: Յովհաննէս Պլուզ Երզնկացին ԺԳ դարու իր Քերականի Մեկնութեան մէջ կ'ըսէ. «փաղանուն ասի, կապերտ եւ գորգ»: Ստեփանոս Սիւնեցի ալ իր քերականութեան մէջ հոմանիչ նշանակած է կապերտ եւ գորգ: Չեռագրաց հաւաքածոյիս հին բառարաններուն մէջ ալ, գորգ՝ կապերտ կը նշանակէ: Հայկազեան իր կարգին կ'ըսէ. «Գորգ, Գ. որպէս ուսմի. քուրջ, այն է կապերտ, եւ որպէս ուսմի. կապերտ⁽¹⁰⁾, խալի»: Ըջտենք որ ամէն ձորձ կամ քուրջ կապերտ չէ, սակայն ամէն գորգ կամ կապերտ կարելի է ձորձ կամ քուրջ ընել:

Բառին ծագումն ու կազմութիւնը ինծի անծանօթ կը մնայ: Հ. Հացունի արձագանգ կ'ըլլայ տեսակէտի մը՝ ըստ որում «կապերտ — հաւանօրէն կապ արմատէն» կ'ընդունուի:

Որքան որ ինծի ծանօթ է, անգլիերէնի մէջ առաջին անգամ 1511ին հանդիպած եմ carpet բառին⁽¹¹⁾: Carpet 1570ին գործածած է Levins: Նոյնիսկ ԺԳ դարուն գործածուած է carpit ձև բառ մը կոշտ լաք նշանակութեամբ, որ կրնայ մեր կապերտ (քիլիմ)ը ըլլալ: Murray իր English Dict.ի մէջ կ'ըսէ. «carpet ըստ երեւոյթի Անգլիերէն է», որ անտարակոյս սխալ է քանի որ հայերէն էր Ե դարուն: Նոյն բառգիրքին համաձայն carpita հաւասար է ԺԳ դարու լատին carpiին, որ քուրջ կը նշանակէ: Կան որ զայն Սանսկրիտ ծագման վերագրած են: Նոյն ատեն յունարէն karpōs լատիներէն carperի համահաւասար, որ կը նշանակէ պոկել: Հին Ֆրանսերէնի մէջ carpite կայ, որ գորգ կամ ուրի սրբիչ, ձորձ, քուրջ կը նշանակէ, որուն սակայն Նոր Ֆրանսերէն carpette հոմանիչ է:

Չարմանալի է որ հին կամ նոր Պարսկերէնի մէջ կը պակսի կապերտ կամ կարպետ ո՛ր եւ է աղաւաղեալ ձևով:

Մէկզի ձգելով բառին ծագումը միայն ըսեմ որ բառը, ինչպէս տեսանք, հայերէնի մէջ գործածուած է Ե դարուն, եւ հաւանօրէն Հայոց ծանօթ էր ատկէ շատ առաջ ալ, քանի որ մեր թարգմանիչները զայն գործածած են իբր բուն հայ բառ, իմաստովը լաւ ծանօթ Հայոց, մինչ յունարէն բնագրին մէջ բառն ու իր հայեցի իմաստը բոլորովին կը պակսի:

Անտարակոյս բուն հին եւ մաքուր հայեցի հնչումը կապերտ⁽¹²⁾

(9) Պատ. Աղուանից Աշխարհի, Թիֆլիզ, 1913, էջ 356-7:

(10) Ռամիօրէն կարպետը կրնայ շատ հին ըլլալ մեր մօտ: Եթէ պարզապէս վերիպակ չէ գրչութեան ատեն գրիչէն. մենք Լազարեան 887 թուականէն աւետարանին մէջ, Մարկոս Բ. 21, ԿԱՐՊԵՏ կը կարդանք. այլուր սակայն միշտ ԿԱՊԵՏ է:

(11) The Principal Navigations, Voyages, etc. Richard Hakluyt, 1927, Vol. III, p. 3.

(12) Կարպետ, տես Հանդ. Ամս. 1923, էջ 477: Թորոս Աղբար, Ա. էջ 168, 244 եւն.: